§Գլոբալ գործընկերություն հանուն սոցիալական հաշվետվողականություն¦ (GPSA)
հիմնադրամի 5-րդ մրցույթի հրավեր
Դիմելուց առաջ ծանոթացեք Դիմելու ուղեցույցին
Օգտագործեք հետևյալ դիմումի ձևը

Հայաստան.

Թափանցիկություն, հաշվետվողականություն և ներառական մասնակցություն տեղական մակարդակում

Թեմաներ՝ Կլիմայի փոփոխության դեմ գործողություն և առողջապահական ծառայությունների հզորացում

§Գլոբալ գործընկերություն հանուն սոցիալական հաշվետվողականության¦ հիմնադրամն ուրախությամբ հայտարարում է Հայաստանի ՔՀԿ դրամաշնորհների մրցույթի առաջին հրավերն՝ իր հինգերորդ գլոբալ մրցույթի շրանակներում: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ-ներ), որոնք Հայաստանում ունեն իրավաբանական անձի կարգավիճակ և սոցիալական հաշվետվության դաշտում գործունեության փորձ, կարող են ծրագրային առաջարկներ ներկայացնել:

Հայաստանի համար արված հրավերը նպատակ ունի օժանդակել թափանցիկության, հաշվետվողականության և քաղաքացիների ներառական մասնակցության բարձրացման համընդհանուր նպատակի իրագործմանը, ինչպես նաև բարելավել պետության և քաղաքացիական հասարակության կարողությունները, գիտելիքն ու փորձը՝ սոցիալական հաշվետվողականության համագործակցային մեխանիզմների կիրառման մասով:

Ծրագրային առաջարկներ են ընդունվելու երկու հիմնական թեմատիկ ուղղություններով՝

1) Տեղական մակարդակում կլիմայի փոփոխության դեմ իրականացվող գործողություններում քաղաքացիների ձայնի և վերահսկողության հզորացում՝ հանուն տարածաշրջանի ներառական զարգացման
2) Առողջապահական համակարգերի հզորացում և ներառական սպասարկում՝ Քովիդ-19 համավարակից վերականգնման համատեքստում:

Սոցիալական ներառումն ու քաղաքացիական տեխնոլոգիաների կիրառումը հատվող թեմաներ են CfP-ի համար: Այս հատվող թեմաներին զուգահեռ խրախուսվում է նորարարական մոտեցումը:

Առաջարկվող միջամտությունները պետք է նպատակաուղղված լինեն տեղական մակարդակում կարողությունների, գիտելիքների, սպասարկման կամ կլիմայի փոփոխության ազդեցության և հետևանքների վերաբերյալ տեղի շահագրգիռ կողմերի իրազեկության մասով առկա բացերը լրացնելուն: Պետք է առաջարկվեն փորձնական գործողությունների պլաններ, որոնց միջոցով հնարավոր կլինի տեղական մակարդակում բարձրացնել դիմակայունությունը և կարողություններ ձևավորել երկարաժամկետ գործողությունների համար: Հաջողված ծրագրային առաջարկները պետք է պարունակեն ծրագրային գործողությունների

վերջնարդյունքների մոնիթորինգի և գնահատման լուրջ միջոցառումներ, այդ թվում քաղաքացիների ձայնն ու կարծիքը ներառելու միջոցով:

Մրցույթում կարևորվում են սոցիալական հաշվետվողականության համագործակցային մոտեցումները՝ քաղաքացիների հետ համակարգված հետադարձ կապ ձևավորելու և դա տեղական ինքնակառավարման, մարզային և հանրապետական մակարդակում հանրային հաստատություններում օգտագործելու նպատակով: *Համագործակցային սոցիալական հաշվետվողականությունը* իրենից ենթադրում է քաղաքացիների մասնակցության ներառական գործընթացներ, որոնց միջոցով քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ-ները) կնպաստեն հիմնախնդիրների՝ համագործակցային եղանակով լուծմանը քաղաքացիների, հատկապես, մարգինալացված ու խոցելի խմբերի և որոշումների կայացման համար պատասխանատու պետական հաստատությունների կողմից: Ստացված տեղեկատվությունը պետք է օգտագործվի քաղաքականության մշակման և իրականացման գործառույթների շտկման ու բարելավման միջոցառումներ ներմուծելու համար, ներառյալ քաղաքացիների և պետական հատվածի կողմից համատեղ մշակվող և համատեղ իրականացվող արձագանքման միջոցառումներ:

Դրամաշնորհի ընդհանուր նպատակները

Դրամաշնորհները նախատեսված են ՔՀԿ ծրագրերին ռազմավարական ու հետևողական աջակցություն տրամադրելու համար՝ հետևյալ նպատակներով.

- Կառավարման և զարգացման հետ կապված կարևոր խնդիրների լուծում սոցիալական հաշվետվողականության գործընթացների միջոցով, որտեղ կիրառվում են քաղաքացիների հետ հետադարձ կապի և մասնակցային մեթոդաբանություններ՝ ուղղված այդ խնդիրների լուծման հարցում կառավարման մարմիններին և պետական հաստատություններին աջակցմանը.
- Քաղաքացիական հասարակության սոցիալական հավշետվողականության գործառույթի հզորացում՝ ներդրում կատարելով ՔՀԿ-ների կառուցվածքային հզորացման մեջ և ապահովելով փոքր, նորահայտ ՔՀԿ-ների մենթորինգը սոցիալական հաշվետվողականության ոլորտում կայացած, խոշոր ՔՀԿ-ների կողմից: GPSA-ը առաջնահերթություն է տալու այն ծրագրային առաջարկներին, որոնք՝ ա) իրականացվում են ՔՀԿ-ների դաշինքների կամ գործընկերությունների կողմից, բ) ներառում են դրամաշնորհի համաֆինանսավորում առաջնորդող ՔՀԿ-ի և ՔՀԿ գործընկերոջ կողմից:

Ծրագրային առաջարկներում պետք է երևա ներառական մասնակցային մոտեցումների կիրառումը՝ քաղաքացիներին, հատկապես, մարգինալացված և խոցելի խմբերի քաղաքացիներին՝ համակարգային հետադարձ կապի ձևավորման և խնդիրների՝ համագործակցային եղանակով լուծման գործընթացում ներգրավելու ուղղությամբ: Նրանք նաև պետք է մասնակցային մեխանիզմները կապեն տեղական համայնքներում, մարզային և հանրապետական մակարդակում պետական հաստատությունների ընթացիկ նախաձեռնություններին, որոնք ուղղված են հանրային անվտանգության կառավարման բարեփոխմանը: Առաջարկվող միջամտություններում կարող են մեկտեղվել թիրախային աշխարհագրական տարածքները, սակայն դրանք պետք է հստակ կապված լինեն՝ (ա) ավելի

բարձր (մարզային կամ հանրապետական) մակարդակում իրականացվող հանրային նախաձեռնություններին, և (բ) այդ մեխանիզմները մասշտաբայնացնելու հնարավորությանը՝ տարածելով դրանք ավելի մեծ աշխարհագրական ծածկույթով: Նախապատվությունը կտրվի այն ծրագրային առաջարկներին, որոնք հասցեագրված կլինեն Երևանից դուրս՝ մարզերին:

Դիմումների ներկայացման վերաբերյալ վիրտուալ տեղեկատվական հանդիպումը տեղի կունենա [*ամսաթիվ, ժամ, զում հղում*]: